ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 16 » սեպտեմբերի 2022 թվականի N:495-Ա ք.Գյումրի

ԱՐՍԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի N 1239-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ, 4-րդ, 11-րդ և 22-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի օգոստոսի 26-ի N ԳՍ/17.3/22870-2022 գրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի գլխավոր քարտուղար Արսեն Աբրահամյանին 2022 թվականի սեպտեմբերի 19-ին գործուղել քաղաք Երևան՝ «Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպությունում կայանալիք հայ-ռուսական միջտարածաշրջանային իններորդ համաժողովին մասնակցելու նպատակով:

2. Գործուղման տևողությունը մեկ օր՝ 2022 թվականի սեպտեմբերի 19-ին:

3. Արսեն Աբրահամյանի գործուղման գտնվելու ընթացքում վերջինիս կփոխարինի գլխավոր քարտուղարի տեղակալ Տիգրան Ղարիբյանը:

4. Արսեն Աբրահամյանին՝ գործուղումից վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ներկայացնել հաշվետվություն գործուղման ընթացքում կատարած աշխատանքների վերաբերյալ՝ համաձայն հաստատված ձևի:

Ն.ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է